Հավելված N 1
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2023-54» ծածկագրով հրավերի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | | | | հասցեն* | ժամկետը |
| 1 | 33200000 | SARS-COV-2 հայտնաբերման ՊՇՌ թեստ | | Ռեագենտների ամբողջական հավաքածու կլինիկական նյութի մեջ ՊՇՌ մեթոդով SARS-COV-2 վիրուսի ՌՆԹ-ի հայտնաբերման համար: Հավաքածուն հարմարեցված է և՛ ռոտորային, և՛ թասիկային ամպլիֆիկատորների համար: Ամպլիֆիկացիայի ընդհանուր տևողությունը (արդյունքների ստացմամբ)՝ առավելագույնը 110 րոպե: Հավաքածուն ունենա առնվազն 2 գենի հայտնաբերման հնարավորություն, դրական, բացասական և ներքին ստուգիչներ: Ունենա բարձր զգայունություն՝ ոչ պակաս 98%, սպեցիֆիկություն՝ ≥98%: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ունենա արտադրական փաթեթավորում, պիտակավորում՝ արտադրության և պիտանելիության ժամկետների նշմամբ, որակի հավաստագիր՝ ISO 9001, CE: Տեղափոխման և պահպանման պայմանները՝ համաձայն արտադրողի կողմից ներկայացված ուղեցույցի: | հատ | | | 28,800.00 | ք.Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի/Համաձայնագրի կնքման պահից 30 օրացուցային օրվա ընթացքում |
| 2 | 33200000 | ԴՆԹ/ՌՆԹ մագնիսական սորբցիայի մեթոդով անջատման հավաքածու | | Ռեագենտների հավաքածու՝ նախատեսված կլինիկական նմուշներից ՌՆԹ-ի սորբցիայի մեթոդով անջատման համար: Հավաքածուի գործունեության հիմքում ընկած է մագնիսական սորբենտի մասնիկների մակերեսին ՆԹ-ների մոլեկուլների հետադարձ կապի վրա հիմնված մեթոդը: Հավաքածուն նախատեսված է վիրուսի ՌՆԹ-ի ձեռքով անջատման համար և հանդիսանում է մագնիսական մասնիկների միջոցով սորբցիայի մեթոդ՝ հետադարձ տրանսկրիպցիայի և պոլիմերազային շղթայական ռեակցիայի հաջորդիվ կատարման համար: Պարունակում է մագնիսական սորբենտ, լիզիսի լուծույթ, լվացող հեղուկ(ներ), կորզող (элюирующий) լուծույթ, բուֆեր ՆԹ  պահպանման համար՝ համապատասխան քանակություններով: Նախատեսված է 96-100 անջատման համար: Պիտանելիության ժամկետը՝ 9-12 ամիս: Հավաքածուի տեղափոխման ջերմային ռեժիմը 2 - 8°C է, մինչև 10 օր: Պիտանելիության ժամկետը առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր): Փաթեթավորումն ու պիտակավորումը համապատասխանեն ISO 18113 շարքի ստանդարտների պահանջիներին: Արտադրությունն ունենա ներդրված որակի կառավարման համակարգ՝ որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին համապատասխան (ISO 13485, 9001, CE և/կամ IVD և/կամ գրանցում առնվազն 1 երկրում: | լրակազմ | | | 300.00 | ք.Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի/Համաձայնագրի կնքման պահից 30 օրացուցային օրվա ընթացքում |

***Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը և բեռնաթափումը համապատասխան պահեստ իրականացվում է Վաճառողի ուժերով և միջոցներով:**